

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14
վիճակագրության պետական խորհրդի նիստի

10.12.2012թ

Ժ.11: 00

Մասնակցում էին՝ Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Ս.Դավթյան, Յու. Պողոսյան, Լ.Պետրոսյան (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար):

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (նախագահի տեղակալ), Վ.Սարոյան (իրավաբանական բաժնի պետ), Ա.Դաշյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ), Լ. Հարությունյան (բիզնես ռեգիստրի բաժնի պետ):

Օրակարգի նախագծում՝ երկու հարց.

1. «Իրավաբանական անձանց վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթը», «Իրավաբանական անձանց կողմից բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի տվյալների մասով ներկայացվող հարցաթերթի լրացման կարգի մասին հրահանգը» և «Անհատ ձեռնարկատերերի վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթը», «Անհատ ձեռնարկատերերի կողմից բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի տվյալների մասով ներկայացվող հարցաթերթի լրացման կարգի մասին հրահանգը» հաստատելու, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2003թ. մարտի 14-ի թիվ 04-Ն և 05-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Չեկուցող՝ Լ. Հարությունյան/

2. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Իրավաբանական անձանց վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթը», «Իրավաբանական անձանց կողմից բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի տվյալների մասով ներկայացվող հարցաթերթի լրացման կարգի մասին հրահանգը» և «Անհատ ձեռնարկատերերի վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթը», «Անհատ ձեռնարկատերերի կողմից բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի տվյալների մասով ներկայացվող հարցաթերթի լրացման կարգի մասին հրահանգը» հաստատելու, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2003թ. մարտի 14-ի թիվ 04-Ն և 05-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

Որոշեցին՝

Հաստատել «Իրավաբանական անձանց վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթը», «Անհատ ձեռնարկատերերի վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթը» և դրանց լրացման կարգի մասին հրահանգները համաձայն հավելվածների, իսկ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2003թ. մարտի 14-ի թիվ 04-Ն և 05-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչել:

/Նորմատիվ/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ